

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՏՐԻ ԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՍՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

№ 6/08

Քաղ. Երևան

25 մարտի 2008թ.

Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. մարտի 25-ի նիստում (արձանագրություն № 59/1) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Չ.Սանուկյանի 2008թ. մարտի 5-ի բողոքը ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ S.A.CONFISERIE LEONIDAS (BE) ընկերության «PRALINES LEONIDAS» (IR 887893) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում 29-րդ դասի բոլոր հայտարկված ապրանքների համար մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. հունվարի 15-ի իր որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 90.20-րդ կետի համաձայն, «PRALINES LEONIDAS» (IR 887893) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում 29-րդ դասի բոլոր հայտարկված ապրանքների նկատմամբ 28.06.2007թ. նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ՝ համարելով, որ նշանը չի կարող գրանցվել նշված դասում, քանի որ այն պարունակում է սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի մասին:

Համաձայն չլինելով որոշման հետ բողոքարկողը բերում է հետևյալ փաստարկները:

Բողոքարկողը նշում է, որ փորձաքննության որոշումը հիմնավոր կլիներ, եթե «PRALINES LEONIDAS» (IR 887893) նշանը հայտարկված լիներ 29-րդ դասի բոլոր ապրանքների համար: Մինչդեռ հայտատուի կողմից ներկայացված ապրանքների ցանկը, բողոքարկողի կարծիքով, պարունակում է այն ապրանքները, որոնք վերաբերում են քաղցրավենիքին կամ կարող են

օգտագործվել շոկոլադե դեսերտներ պատրաստելու համար: Բողոքարկողը կարևոր է համարում նաև նշել, որ «PRALINES LEONIDAS» ապրանքային նշանը այն տեսքով, որ հայտարկված է, հայտնի է Եվրոպայում և օգտագործվում է լայն ճանաչում ունեցող S.A.CONFISERIE LEONIDAS ֆիրմայի կոֆեբարերի ցուցափեղկերի վրա, որտեղ մատուցվում է սուրճ և քաղցրավենիք: Սպառողներին այդ ֆիրման հայտնի է ոչ միայն իր շոկոլադով, այլ և դեսերտների լայն ընտրանիով: Այսինքն, բողոքարկողը համարում է, որ «PRALINES LEONIDAS» (IR 887893) գրանցման գործողության տարածումը Հայաստանում 29-րդ դասի ապրանքների համար չի գցի սպառողին մոլորության մեջ ապրանքների վերաբերյալ:

Բերելով իր փաստարկները, բողոքարկողը խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և տարածել S.A.CONFISERIE LEONIDAS (BE) ընկերության «PRALINES LEONIDAS» (IR 887893) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը ՀՀ տարածքում նաև 29-րդ դասի հայտարկված բոլոր ապրանքների համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը գտնում է, որ հայտարկված համակցված ապրանքային նշանը ընկալվում է իր ամբողջությամբ, ընդ որում, առաջնային ընկալման տարր է հանդիսանում հին հունական հերոսի պատկերը, իսկ բառային տարր հանդիսացող լատինատառ «pralines Leonidas» գրառումը Հայաստանի սպառողների մեծամասնության կողմից կընկալվի որպես իմաստ չունեցող բառային արտահայտություն, այլ ոչ թե որպես «praline» (անգլերենից թարգմանաբար՝ քաղցրավենիքի տեսակ) ապրանքը նկարագրող տարր: Հետևաբար, փորձաքննության կողմից «PRALINES LEONIDAS» IR 887893 ապրանքային նշանի գրանցման մերժումը օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և կարգի 90.20-րդ կետի հիմքերով տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ նշանը չի պարունակում կեղծ կամ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ԱԾՄԴ-ի 29-րդ դասում հայտարկված ապրանքների մասին. Հետևապես, «PRALINES LEONIDAS» IR 887893 ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը ենթակա է չեղյալ ճանաչման, իսկ նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում պետք է տարածվի նաև ԱԾՄԴ-ի 29-րդ դասի հայտարկված ապրանքների համար:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել S.A.CONFISERIE LEONIDAS (BE) ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել «PRALINES LEONIDAS» IR 887893 համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2008թ. հունվարի 15-ի կրկնական փորձաքննության որոշումը և «PRALINES LEONIDAS» IR 887893 ապրանքային նշանի գրանցման գործողությունը տարածել Չայաստանի Հանրապետությունում՝ 29-րդ դասի հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի  
Նախագահ

Ա.Ազիզյան